

ՎԱՐԱԿԻՉ ԵՎ ՈՉ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌՈՒՄՈՎ ՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐ ԱՄՍՎԱ ԴՐՈՒԹՅԱՄԲ

Աղիքային վարակիչ հիվանդություններ

2022 թվականի սեպտեմբեր ամսին արձանագրվել է աղիքային վարակիչ հիվանդության 933 դեպք, ինչը գրեթե նույնն է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ: Աղիքային վարակիչ հիվանդությունների բռնկումներ չեն արձանագրվել, համաճարակային իրավիճակը կայուն է:

Սեպտեմբեր ամսին օգոստոս ամսվա համեմատ հիվանդացությունը նվազել է մոտ 1.6 անգամ, ինչը բնորոշ է տարվա այս շրջանին:

Սուր շնչառական հիվանդություններ

2022 թվականի սեպտեմբեր ամսին արձանագրվել է սուր շնչառական վարակներով (ՍՇՎ) պայմանավորված միջին ինտենսիվության ակտիվություն, հիվանդացությունը գտնվում է գրեթե միևնույն մակարդակի վրա: Հիվանդացության ցուցանիշն օգոստոս ամսվա համեմատ աճել է՝ մոտ 1.5 անգամ, իսկ 2021թ. նույն ժամանակահատվածի համեմատ՝ բարձր է 1.2 անգամ: ՀՀ մարզերից ՍՇՎ-ով ակտիվությունն առավել բարձր է Արարատի, Գեղարքունիքի և Տավուշի մարզերում: Ընդհանուր դեպքերի 52,9%-ը կազմում են 0-18 տարեկան երեխաները: Շտապ օգնության կանչերի 25%-ը պայմանավորված են ՍՇՎ-ով:

Դեղքային համաճարակաբանական հսկողության շրջանակներում իրականացված լաբորատոր հետազոտությունների արդյունքում գրիպի հարուցիչներ չեն հայտնաբերվել: Այլ շնչառական վարակներից շարունակում են արձանագրվել՝ ռինովիրուս, պարագրիպ, ադենովիրուս, բոկավիրուս, ռեսպիրատոր սինցիտիալ վիրուս հարուցիչները, ինչպես նաև կորոնավիրուսային հիվանդության SARS-Cov-2 հարուցիչներ:

Կորոնավիրուսային հիվանդություն

2022 թվականի հոկտեմբերի 17-ի դրությամբ Հայաստանում արձանագրվել է կորոնավիրուսային հիվանդության 444869 դեպք (հ.գ. ըստ 100.000 բն.՝ 15034.4), որից՝ 699-ը (0.2%) ստանում են բուժում, 433602 (97.5%) անձ առողջացել է, 8706 դեպքում (հ.գ. ըստ 100.000 բն.՝ 294.2) արձանագրվել է մահվան ելք, մահաբերությունը կազմում է 2%:

Վերջին 14 օրվա ընթացքում արձանագրվել է հիվանդության 1084 դեպք (հ.գ. 36.6 դեպք ըստ 100.000 բնակչության), ինչը նախորդ նույն ժամանակահատվածի համեմատ (2341 դեպք, հ.գ. 79.1 դեպք ըստ 100.000 բնակչության) նվազել է -54%-ով:

Թեստավորման դրական արդյունքների մասնաբաժինը վերջին 14 օրվա ընթացքում կազմել է 12.9%, այնինչ նախորդ 14-օրյակում՝ 18.4%:

Վերջին 14 օրվա ընթացքում արձանագրվել է հիվանդության 36.6 դեպք ըստ 100.000 բնակչության, իսկ թեստերի դրական արդյունքների մասնաբաժինը վերջին 14 օրվա ընթացքում կազմել է 12.9%:

Քիմիական թունավորումներ

2022 թվականի սեպտեմբեր ամսվա ընթացքում արձանագրվել է քիմիական թունավորումների 246 դեպք, որոնց 39.4%-ը գրանցվել է Երևան քաղաքում, իսկ 60.6%-ը՝ մարզերում: Արձանագրված դեպքերի գերակշիռ մասը՝ 35%-ը արդյունք են թունավոր կենդանիների խայթոցի, 23.6%-ը՝ ալկոհոլային թունավորումները՝ արդյունք են ալկոհոլի բարձր չափաբաժինների ընդունման, 21.5%-ը՝ դեղամիջոցներով՝ արդյունք են ինքնաբուժման, ինքնասպանության և ծնողի անուշադրության, 11.4%-ը՝ արդյունք են օրգանական լուծիչների, մասնավորապես՝ շմոլ գազի և այլ կենցաղային նյութերի թունավոր ազդեցության, 4.5%-ը՝ օճառների և լվացող նյութերի թունավոր ազդեցության, 2.4%-ը՝ այլ և չճշտված ծագման թունավոր նյութերի ազդեցության, 1.6%-ը՝ թունաքիմիկատների:

2022թ. սեպտեմբեր ամսին քիմիական թունավորումների հիվանդացության ցուցանիշը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 1.3 անգամ:

Սուր արտաընդերային վիրուսային հեպատիտներ

2022 թվականի սեպտեմբեր ամսին նախորդ տարվա նույն ժամանակի համեմատ սուր արտաընդերային վիրուսային հեպատիտի հիվանդացության ցուցանիշն աճել է՝ նախորդ տարի արձանագրվել է 1, 2022 թ-ին՝ 2 դեպք:

Ջոնոզ և մակաբուժային հիվանդություններ

2022 թվականի սեպտեմբեր ամսին հատուկ վտանգավոր վարակների՝ սիբիրյան խոցի, լեպտոսպիրոզի, կատաղության, տուլարեմիայի դեպքեր չեն արձանագրվել: Արձանագրվել է առաջնակի հայտնաբերված սուր բրուցելոզի 17 դեպք:

Հանգիստ է եղել նաև մալարիայի համաճարակային իրավիճակը, բերովի դեպքեր չեն արձանագրվել:

Արձանագրվել է ընդերային լեյշմանիոզի 2 դեպք՝ Տավուշի մարզում:

2022թ. սեպտեմբերին գրանցվել է Լայմի հիվանդության 4 դեպք, որից 2-ը՝ Երևան քաղաքում, մեկական դեպք Սյունիքի և Տավուշի մարզերում: Տգերով փոխանցվող այլ հիվանդությունների, այդ թվում՝ Ղրիմ-Կոնգոյի հեմոռագիկ տենդի, անապլազմոզի, ռիկետոցիոզների տարածման վտանգը բարձր է՝ կապված տզերի բնական տարածագոտիների ընդլայնման և սահմանամերձ տարածքներից վարակի ներբերման վտանգի հետ:

Ասկարիդոզով հիվանդացության ցուցանիշը 1.4 անգամ նվազել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ: Էնտերոբիոզի ցուցանիշը ևս նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ նվազել է 1.8 անգամ:

Կառավարելի վարակիչ հիվանդություններ

2022 թվականի սեպտեմբերի 17-ի դրությամբ դրությամբ Հայաստանի Հանրապետությունում կառավարելի վարակիչ հիվանդությունների առումով համաճարակային իրավիճակը բարենպաստ է: Չեն գրանցվել պոլիոմիելիտի, դիֆթերիայի, փայտացման, կարմրուկի, կարմրախտի, համաճարակային պարոտիտի, դեպքեր, իսկ կապույտ հազի և հարկապույտ հազի դեպքերը գրանցվում են հազվադեպ: